ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N «ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5»

ք. Երևան «25» 04 2018թ.

ՀՀ ԱՍՀՆ Սոցիալական ապահովության պետական ծառայությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար՝ Մ. Մինասյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ կոնսորցիումը, ի դեմս «Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Հովհաննիսյանի, որը գործում է 2018թ.մարտի 19-ին կնքված կոնսորցիումի պայմանագրի հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է արխիվային ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 33600000 (երեսուներեք միլիոն վեց հարյուր հազար) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:

7.7 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.8 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.10 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.11 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.12 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.13 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն	«Վեբ Ֆաունդեյշն» ՍՊԸ
ՀՎՀՀ 02505511	ՀՀ, Ք. Երևան, Ն. Զարյան 73/1, 0014
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	Բանկ՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Հ/Հ 900011556355	Կոմիտաս մ/ճ
	Հ/Հ 16063010968600
	ՀՎՀՀ 00145026
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«25» 04 2018 թ. կնքված
«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավորը	Ընդհանուր գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր քանակը	Մատուցման	
						Հասցեն	Ժամկետը
1	92511110-1	**Նախաբան** Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների սպասարկումը իրականացվելու է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Ծառայություն) 2018 թվականի պետական բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների շրջանակներում: «Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-96-Ն ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն՝ 2017 թվականի հունվարի 1-ից դադարեցվում է աշխատանքային գրքույկների կիրառությունը աշխատանքային հարաբերություններում: Գործատուն Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով 2017 թվականի հունվարի 1-ից հետո՝ երկու տարվա ընթացքում, իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները հանձնում է լիազոր մարմնին, աշխատանքային գրքույկում առկա տեղեկատվությունը պետական կենսաթոշակային համակարգի տվյալների շտեմարան ներառելու նպատակով, ապա վերադարձնում է աշխատողներին: ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ լիազոր մարմին է ճանաչվել Ծառայությունը: Նույն որոշմամբ հաստատվել է աշխատանքային գրքույկները լիազորած մարմին ներկայացնելու և աշխատողներին հանձնելու կարգը: **Անհրաժեշտությունը** Նպատակ ունենալով ապահովել ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ Ծառայությանը վերապահված լիազորությունների արդյունավետ իրականացումը մշակվել և Ծառայությունում է ներդրվել Ծառայության տարածքային բաժիններ ներկայացված աշխատանքային գրքույկների (խմբաքանակների) հաշվառումն ու գրքույկների էլեկտրոնային լուսապատճենների անձնավորված հաշվառումն ապահովող տեղեկատվական համակարգը (այսուհետ՝ «Աշխատանքային գրքույկներ» համակարգ): Գործատուները աշխատանքային գրքույկները ներկայացնում են Ծառայության տարածքային ստորաբաժանումներ, ընդ որում, գործատուն, մինչև իր մոտ վարվող աշխատանքային գրքույկները տարածքային բաժին ներկայացնելը, աշխատանքային գրքույկում լրացված վերջին էջից հետո նշում է աշխատանքային գրքույկի լրացված բոլոր էջերի թիվը և ստորագրում (կնիքի առկայության դեպքում՝ նաև կնքում)՝ նշելով իր զբաղեցրած պաշտոնը, անունը և ազգանունը:	դրամ	33600000	1	Ք.Երևան, Նալբանդյան 13	**Պայմանագրի ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 130 օրացուցային օր**

		Գործատուների կողմից ներկայացրած աշխատանքային գրքույկները պետք է տեսաներածվեն (սկանավորվեն) կամ այլ եղանակով ստացվեն դրանց էլեկտրոնային լուսապատճենները, որոնք պետք է ներառվեն «Աշխատանքային գրքույկներ» համակարգ՝ հետագայում, որպես աշխատանքային ստաժը հաստատող տեղեկատվություն կիրառելու նպատակով, իսկ աշխատանքային գրքույկները վերադարձվեն գործատուներին՝ աշխատողներին վերադարձնելու նպատակով: Հաշվի առնելով ՀՀ պետական բյուջեով այդ նպատակով հատկացված միջոցները, ինչպես նաև իրականացվելիք աշխատանքների ծավալը՝ նախատեսվում է գործընթացն իրականացնել փուլերով: Սույն տեխնիկական բնութագրի շրջանակում նախատեսվում է ստեղծել 160000 աշխատանքային գրքույկների էլեկտրոնային տարբերակներ: **Նպատակը** Սույն տեխնիկական բնութագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Օրենքով, ինչպես նաև որոշմամբ սահմանված գործառույթները՝ ապահովելով գործատուների կողմից ներկայացված աշխատանքային գրքույկների տեսաներածումը (սկանավորումը) կամ այլ եղանակով ստացված աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճենների ստացումը և ներառումը (ներբեռնումը) «Աշխատանքային գրքույկներ» համակարգ: ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի նախատեսվում է՝ • «Աշխատանքային գրքույկներ» համակարգով իրականացնել անձանց նույնականացումը ՀՀ բնակչության պետական ռեգիստրի տվյալների հիման վրա, • ակնհայտ անհամապատասխանությունների բացակայության դեպքում իրականացնել աշխատանքային գրքույկների տեսաներածումը, • աշխատանքային գրքույկի էլեկտրոնային լուսապատճենի ներառումը (ներբեռնումը) «Աշխատանքային գրքույկներ» համակարգի տվյալների շտեմարան՝ ապահովելով աշխատանքային գրքույկի էլեկտրոնային լուսապատճենի կցումը անձին, • ակնհայտ անհամապատասխանությունների վերաբերյալ տեղեկատվության ձևավորումը՝ գործատուին տեղեկացնելու նպատակով, • աշխատանքային գրքույկները գործատուին վերադարձնելու ժամկետը երկարաձգելու որոշում ընդունելը (ժամկետը երկարաձգելը), ինչպես նաև գործատուին տեղեկացնելը: **Աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճեններին ներկայացվող հիմնական պահանջներ և այլ պայմաններ** Աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճենները պետք է բավարարեն հետևյալ պահանջներին՝ • յուրաքանչյուր աշխատանքային գրքույկի՝ գրառումներ պարունակող բոլոր էջերի էլեկտրոնային լուսապատճենները պետք է ձևավորվի որպես առանձին (միասնական) գրադարան (folder), • աշխատանքային գրքույկի թղթային յուրաքանչյուր երկու էջ արտացոլվում է էլեկտրոնային լուսապատճենի մեկ էջում (սկանավորվում է որպես մեկ էջ), • աշխատանքային գրքույկի էլեկտրոնային լուսապատճենը պետք է լինի ամբողջական և ամբողջությամբ ընթեռնելի՝ ունենալով առնվազն բնօրինակ փաստաթղթի					

		ընթեռնելիությունը, • աշխատանքային գրքույկի էլեկտրոնային լուսապատճենի էջերի հերթականությունը պետք է համապատասխանի աշխատանքային գրքույկի էջերի հերթականության հետ, • ունենան 200 dpi կետայնություն, որոնք որպես բնօրինակ պետք է հատկացվեն Ծառայությանը առավել մանրամասն դիտման, ըստ անհրաժեշտության նաև տպագրության համար, • ունենան նաև 72 dpi կետայնության տարբերակները, որոնց չափսերը պետք է նախատեսված լինեն էկրանային դիտման համար: Միաժամանակ Կատարողը սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքները պետք է կազմակերպի այնպես, որ պահպանվեն ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի պահանջները, այդ թվում, կարգի 17-րդ կետով սահմանված ժամկետները: Կատարողը պայմանագիրը կնքելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում՝ ուղեկցող նամակով պետք է Ծառայությանը տրամադրի իր ներկայացուցչի՝ սպասարկման համակարգողի, ինչպես նաև «Աշխատանքային գրքույկներ» համակարգի շահագործողների տվյալները՝ գրավոր տրամադրելով Ծառայությանը նրանց անունները, ազգանունները, հայրանունները, էլեկտրոնային փոստի հասցեները, պաշտոնները և հեռախոսահամարները: Սպասարկման համակարգողը պետք է աշխատանքի ընթացքում առաջացած հարցերի վերաբերյալ տրամադրի խորհրդատվություն (հեռախոսի կամ էլեկտրոնային փոստի միջոցով): **Աշխատանքների իրականացում և ներկայացում** Կատարողը պետք է իրականացնի հետևյալ աշխատանքները. 1) Ծառայության հետ փոխհամաձայնեցված ժամկետներում, Ծառայության տարածքային ստորաբաժանումների տեղակայման վայրում ստանում է տարածքային ստորաբաժանումներ ներկայացված աշխատանքային գրքույկները, ստորագրում տարածքային ստորաբաժանումների կողմից ձևավորված՝ մշակման հանձնվող գործերի ցանկերը և սկանավորման կամ այլ եղանակով աշխատանքային գրքույկների էլեկտրոնային լուսապատճենները ստանալու համար տեղափոխում դրանք համապատասխան վայր, 2) ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 18-րդ և 19-րդ կետերով նախատեսված ակնհայտ անհամապատասխանությունների բացակայության դեպքում սկանավորում է իրեն հանձնված աշխատանքային գրքույկները կամ այլ եղանակով ստանում է դրանց էլեկտրոնային լուսապատճենները, 3) պատկերների էլեկտրոնային լուսապատճենները մշակելու համար նախատեսված ծրագրային գործիքով մշակում է լուսապատճենները՝ արդյունքները ներառելով (ներբեռնելով) «Աշխատանքային գրքույկներ» համակարգ՝ ապահովելով աշխատանքային գրքույկի էլեկտրոնային լուսապատճենի կցումը անձին: 4) Կատարողը սկանավորում է աշխատանքային գրքույկի բոլոր այն էջերը, որոնցում առկա են ձեռքով կատարված գրառումներ (ներառյալ՝ ՀՀ կառավարության 2016 թվականի օգոստոսի 18-ի N 882-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ կետում նշված գրառումը), 5) Աշխատանքային գրքույկները գործատուին վերադարձնելու ժամկետը երկարաձգելու անհրաժեշտության դեպքում այդ մասին պատվիրված նամակով կամ ստորագրությամբ առձեռն հանձնելու կամ այլ պատշաճ եղանակով տեղեկացնում է տարածքային բաժնին, 6) Ծառայության տարածքային ստորաբաժանումների տեղակայման վայրում իրականացնում է Ծառայության տարածքային բաժնից ընդունած աշխատանքային գրքույկները հանձնելու (վերադարձնելու) աշխատանքներ, ստորագրում է տարածքային					

		ստորաբաժանումների կողմից ձևավորած՝ մշակված գործերի ցանկերը, 7) Կատարողը պետք է ապահովի աշխատանքային գրքույկների պատշաճ պահպանություն՝ ընդունելուց մինչև հանձնելը, բացառելու համար աշխատանքային գրքույկների կորստյան ռիսկը: **Հաշվետվություններ** Սույն տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքների իրականացման արդյունքում յուրաքանչյուր ամսվա ընթացքում կատարված աշխատանքների վերաբերյալ Կատարողը Ծառայություն է ներկայացնում հաշվետվություն՝ ուղեկցող նամակով, և տվյալ ամսվա ընթացքում ստացված արդյունքները արտաքին կրիչով, իսկ առնչվող փաստաթղթերը՝ թղթային տարբերակներով:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

«Վեբ Ֆաունդեյշն» ՍՊԸ
ՀՀ, Ք. Երևան, Ն. Զարյան 73/1, 0014
Բանկ՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 16063010968600
ՀՎՀՀ 00145026

(ստորագրություն)

Հավելված N 2
«25» 04 2018 թ. կնքված
«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
Հ/Հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92511110-1	արխիվային ծառայություններ	-	-	-	11760000	11760000	11760000	20160000	20160000	20160000	33600000	33600000	33600000	33600000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն
ՀՎՀՀ 02505511
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011556355

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ
«Վեբ Ֆաունդեյշն» ՍՊԸ
ՀՀ, Ք. Երևան, Ն. Զարյան 73/1, 0014
Բանկ՝ ՎՏԲ Հայաստան Բանկ
Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 16063010968600
ՀՎՀՀ 00145026

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
«25» 04 2018 թ. կնքված
«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«25» 04 2018թ. կնքված
«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Հավելված 9
«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ՏՈՒԺԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
(պայմանագրի կատարման ապահովում)

ք. Երևան «23» ապրիլի 2018 թ.**

«Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ և ««Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն» հիմնադրամ կոնսորցիումը, ի դեմս «Վեբ ֆաունդեյշն» ՍՊԸ-ի տնօրեն Տ. Հովհաննիսյանի /նույնականացման քարտի համար՝ 009384918, տրված 01.02.2018թ. 001-ի կողմից/, որը գործում է 2018թ.մարտի 19-ին կնքված կոնսորցիումի պայմանագրի հիման վրա ՝ (այսուհետև՝ Ընկերություն), սույնով միակողմանի սահմանում է հետևյալ տուժանքի վճարման համաձայնությունը.

1. Համաձայնության առարկան

1.1 Ընկերությունը մասնակցում է ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված՝ *«ՀՀ ԱՍՀՆ ՍԱՊԾ ԳՀԾՁԲ-18/5»* ծածկագրով գնման ընթացակարգին:

1.2 Որպես գնման ընթացակարգի արդյունքում կնքվելիք պայմանագրի կատարման ապահովում, Ընկերությունը Պատվիրատուին է ներկայացնում սույն տուժանքի համաձայնագիրը և կից վճարման պահանջագիրը՝ լրացված և հաստատված Ընկերության կողմից:

1.3 Ընկերությունը սույն տուժանքի համաձայնագրին կից ներկայացվող վճարման պահանջագրի /այսուհետ՝ Պահանջագիր/ ստորագրմամբ անհետևանչելիորեն համաձայնվում է, որ

ա) Պահանջագրի ստորագրմամբ Ընկերությունը տալիս է իր հավաստումը Պահանջագրի «Վճարման պայմանները» դաշտում լրացված «ակցեպտավորված վճարման» համար, որի դեպքում նշված գումարի գանձման հետ կապված Ընկերությանը սպասարկող /վճարող/ Բանկը՝ /այսուհետ՝ Վճարող Բանկ/ ստացված Պահանջագիրը չի ներկայացնում Ընկերությանը լրացուցիչ համաձայնություն ստանալու համար, քանի որ Ընկերության կողմից Պահանջագրի վրա արդեն դրվել է ստորագրությունը՝ ակցեպտավորման նպատակով:

բ) Պահանջագիրը հիմք է հանդիսանում Վճարող Բանկի համար՝ Պահանջագրով նշված ամբողջ գումարը Ընկերության հաշվից գանձելու համար՝ առանց լրացուցիչ ակցեպտավորման:

գ) Ընկերությունը չի կարող գրավոր կամ այլ եղանակով Վճարող Բանկին կարգադրել Պահանջագրի վրա դրված իր ակցեպտը հետ կանչելու մասին:

դ) Ընկերությունը հավաստում է, որ Պահանջագիրը ակցեպտավորել է տուժանքի ամբողջ գումարով:

ե) Ընկերությունը սույնով համաձայնում է, որ Վճարող Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում Պատվիրատուի կողմից ներկայացված վճարման պահանջի և Պահանջագրի իրավաչափության, վավերականության, ներկայացման ժամկետների և Պահանջագրի կատարումն ապահովելու համար Վճարող Բանկի կողմից իրականացվող գործողությունների համար:

1.4 Ընկերության կողմից գնման ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագիրը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Պատվիրատուն սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը բնօրինակներով ներկայացնում է Վճարող Բանկին՝ այդ մասին գրավոր տեղեկացնելով Ընկերությանը: Սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված լինելու դեպքում դրանք Վճարող Բանկին են ներկայացվում էլեկտրոնային կրիչներով, ինչպես նաև դրանցից արտատպված թղթային տարբերակներով:

1.5 Պատվիրատուն Վճարող բանկին կարող է ներկայացնել այլ լրացուցիչ փաստաթղթեր:

1.6 Վճարող Բանկի կողմից Պահանջագրում նշված գումարի վճարման հետևանքով Ընկերության առաջացած ռիսկերի (Ընկերության կրած վնասների) և բացասական հետևանքների համար Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում: Բանկը պարտավոր չէ ստուգելու Ընկերության կողմից պայմանագրի պայմանները խախտելու փաստերը:

1.7 Այն դեպքում, երբ Ընկերության հաշվի միջոցները չեն բավարարում՝ Վճարող բանկը վճարման պահանջագիրը ստանալուց հետո՝ 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում պետք է տեղեկացնի Պատվիրատուին՝ գրավոր ձևով:

1.8 Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Բանկ ներկայացնելուց հետո, Բանկից անկախ պատճառներով, տասն աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին գումարը չվճարվելու դեպքում, Պատվիրատուն չվճարման հետ կապված Ընկերության մասին տեղեկությունները փոխանցում է <<ԱՔՌԱ Քրեդիթ Ռեփորթինգ>> ՓԲԸ (Վարկային բյուրո):

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրը և Պահանջագիրը անհետևանչելի են, ուժի մեջ են մտնում Ընկերության կողմից վավերացման պահից և ուժի մեջ են մինչև 20/12/2018 ** (Ընկերության կողմից կնքվելիք պայմանագրով ստանձնվող պարտավորությունները ողջ ծավալով կատարելու վերջին օրվան, իսկ պայմանագրով երաշխիքային ժամկետ սահմանված լինելու դեպքում՝ երաշխիքային ժամկետի ավարտին հաջորդող 10-րդ աշխատանքային օրը ներառյալ):

2.2.Սույն համաձայնագիրը և կից Պահանջագիրը Պատվիրատուի կողմից Վճարող Բանկին ներկայացնելով՝

2.2.1. Պատվիրատուի կողմից հավաստվում է, որ Ընկերությունը թույլ է տվել պայմանագրային պարտավորությունների խախտում, իսկ

2.2.2. Ընկերության կողմից հավաստվում է, որ սույն տուժանքի համաձայնագիրը և կից Պահանջագիրը պատշաճ ստորագրված է Ընկերության իրավասու անձի կողմից:

2.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3. Ընկերության հասցեն, բանկային վավերապայմանները՝

«Վեբ Ֆաունդեյշն» ՍՊԸ
ՀՀ, Ք. Երևան, Ն. Զարյան 73/1, 0014
Բանկ՝ ՎՏԲ Հայաստան Բանկ Կոմիտաս մ/ճ
Հ/Հ 16063010968600
ՀՎՀՀ 00145026

Տիգրան Հովհաննիսյան

ընկերության տնօրենի անուն, ազգանուն և նստոդագրությունը

Կ.Տ

23 ապրիլի 2018թ.

** *լրացվում է մասնակցի կողմից*

1. **ՎՃԱՐՄԱՆ ՊԱՀԱՆՋԱԳԻՐ**[1]

2. Թիվ

3. Ներկայացման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.

4. Վճարողի անվանումը, կամ անուն ազգանուն (Ընկերություն ՝ «Վեբ Ֆաունդեյշն» ՍՊԸ

5. Վճարողին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ ՎՏԲ Հայաստան Բանկ Կոմիտաս մ/ճ

6. Վճարողի հաշվի համարը՝ 16063010968600

7. Վճարողի ՀՎՀՀ՝ 00145026

8. Վճարողի ՀԾՀ՝

9. Շահառուի անվանումը, կամ անուն ազգանուն ՝ **ՀՀ ԱՍՀՆ սոցիալական ապահովության պետական ծառայություն**

10. Շահառուի ՀԾՀ (չի լրացվում)

11. Շահառուի ՀՎՀՀ՝ **02505511**

12.Շահառուին սպասարկող Ֆինանսական կազմակերպություն (բանկ)՝ **ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն**

13.Շահառուի հաշվի համարը (հշ.N) **900005000758**

14.Գումարը (թվերով և բառերով)՝ 3360000 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուն հազար)

15. Ակցեպտավորված գումարը՝ (թվերով և բառերով) (նախատեսված է նշված գումարի մասնակի ակցեպտի համար, որը չի կիրառվում)

16.Արժույթը (բառերով և կոդով)՝ ՀՀ դրամ, AMD

17.Գործարքի (վճարման) նպատակը՝ *(պայմանագրի կատարման ապահովման համար)*

18. Վճարման կատարման հիմքերը՝ (Փաստաթղթերի անվանումը, այդ թվում՝ տուժանքի մասին համաձայնագիրը, դրանց համարները, պայմանագրի ծածկագիրը որի հիման վրա կատարվում է գանձումը)՝

19. Վճարման պայմանները՝ <ակցեպտավորված վճարում>

20. Առդիր էջերի քանակը՝ --- էջ

22.ա. Շահառուի ստորագրությունները	21.ա. Վճարողի ստորագրությունները
/_____/	/_____/
/_____/	/_____/
22.բ. Կ.Տ.	21.բ. Կ.Տ.

[1] *Վճարման պահանջագիրը լրացվում է համաձայն սույն հրավերով սահմանված «Վճարման պահանջագրի պարտադիր վավերապայմանների և լրացման կարգի»:*

24.ա. Շահառուին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 24.բ. Կ.Տ. 24.գ "___" ___ 20___ թ.	23.ա. Վճարողին սպասարկող ֆինանսական կազմակերպություն /_____/ /ստորագրություն/ 23.բ. Կ.Տ. 23.գ.Կատարման ամսաթիվը՝ "___" ___ 20___թ.